ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել մասնակի՝

Անվավեր ճանաչել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով:

Որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության կողմից նվազագույն գնային առաջարկ ներկայացված չափաբաժինների մասով այլ անձանց ընտրված մասնակից ճանաչելու կամ այդ չափաբաժիններով ընթացակարգը չկայացած ճանաչելու որոշման մասով:

Հայցը՝ որպես անվավերության հետևանք «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասով, մերժել:

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից հօգուտ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից հօգուտ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ մնացած մասով՝ մերժել:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____ 2024 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**